ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ կառավարություն	1.Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում ««ներդրված միջոցները» **բառից**» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««ներդրված միջոցները» **բառերից**» բառերով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
ՀՀ կառավարություն	2.Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ 928.8-րդ և 928.9-րդ հոդվածների վերնագրերում **«հաշիվ»** բառն անհրաժեշտ է փոխարինել **«հաշվի պայմանագիրը»** բառերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդվածներում խոսվում է համապատասխան պայամանագրի մասին:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: